

քրքրական է ազգագրական տեսակէտից, եթէ հեղինակը հաւատարմութեամբ է իր պատկերում մէջ բերել այն, ինչ պատմում են Մալաք տատերը ս. Սարգսի մասին: Մալաք տատի ասելով՝ ս. Սարգիսը հաչ է եղել և կուել է մեր «լիս-հաւատի» համար Ուլիանոս թագաւորի և թուրքերի դէմ կուում էլ մեռել է:

Կան հասարակական տեսակէտից հետաքրքրական ուրիշ գծեր, օրինակ՝

վերը բերած աշակերտի և նահապետական հաւատի ընդհարումը. Մալաք տատի՝ թոռներին աղօթել սովորեցնելը և նրանց պառչաճի լեզուներ պատմելը, բայց դրանք իսկ որ գծեր են. հեղինակը բաւականաչափ չի վեր հանել ու լաւ պատկերացրել, որ կարելի լինէր կանգ առնել, գնահատել նրանց ու եզրափակումների գալ:

Ն. Աղաւանց

ԵՆՆԹ. -- «Կարձ» վէպ, արտատրպած «Մուրճ» ամսագրից. Թիֆլիս, տպարան Մ. Դ. Ռօտինեանցի, 144 երես, զինն է 40 կողէկ:

Երեք վարդապետացու, երեկ էջմիածնի ճեմարանը նոր աւարտած, Շիրակի մէջ ամառալին ճանապարհորդութիւններ են անում: Սոքա պիտի վերադառնան էջմիածին սարկաւազ ձեռնադրելու և արտասահման ուղևորելու համար, այնտեղ ասրածարանութիւն պիտի սովորեն և նոր ուժերով պիտի դան-«... նորէն հոգի և ոգևորութիւն մտցնելու այդ սուրբ կարգերուն և աղօթքներուն մէջ և բժախնդիր ճշտութեամբ ու կանոնաւորութեամբ... կատարելու մեր սրբակրօն պապերու մեզի աւանդած ամէն մէկ ծէսն ու կարգը»: Վէպի սկզբում չայտնում է վարդապետացուներից Արտաշէս Սիրաբեանը միայն, որը գալիս է Խրճկոնքի վանքը սպասելու իւր ընկերներին: Նոյն վանքը ամառանոց է եկել Ալէքսանդրապոլից Քանեանների ընտանիքը: Պարոն Քանեանը

իրաւարան է, լայն զարգացման և հասարակական ձգտումների տէր մի մարդ: Սրանց հետ է նաև տիկին Քանեանի քույր Շուշանիկը, որը թիֆլիսում մանկաբարձութիւն է սովորում: Քանեանների մենակութիւնը նրանց մտքեցնում է Արտաշէսին: Քանեանը նրա հետ վէճի է բռնում, որից մենք ծանօթանում ենք թէ Քանեանի և թէ Արտաշէսի հպեացքների հետ: Արտաշէսը մասնաւորապէս մտերմանում է օրիորդ «Շուշիկի» հետ. սրանց չարաբերութիւնները արդէն խիստ մօտ են դառնում—հեռու զբօսանքներ ձորերում, երկար խօսակցութիւններ: Եւ այն, երբ այդ մտերմութիւնը ամենամեծ աստիճանին էր հասել, երբ Արտաշէսը սպասում էր նշանակւած ժամի հասնելուն, որ Շուշիկի հետ զբօսանքի գնալ, որի համար... ընտրած էր ձորի ամենէն ժալոտր ու ամենէն

սիւս շաւիղներէն մէկը, որ վերը արտերը կը հանէր. պէտք էր, որ վերելքը գծար լինէր. աչդ անհրաժեշտ էր, աճա աչդ մոմէնտին գալիս են Արտաշէսի երկու ընկերները՝ Մինասը և Սերորը, որոնք ուրախութեամբ բարևում են Արտաշէսին, բայց շուտով նկատում են, որ նրանում ինչ որ փոփոխութիւն կա՛ւ Միքանի ժամանակից չետո՛ւ հասկանում են իսկական պարտաւոր, լանդիմանում են Արտաշէսին և տեսնում են որ նա ամենին չի էլ ցաւում, երբ նրան ատում են, որ կը հարկադրին «ձեռնադրողներու ցանկէն դուրս ձգելու», ալ մի փոքր ցնցելուց չետո՛ւ պատասխանում է «ե շաք ալ խելացի բան կ'ընեն»: Վերջապէս Մինասը զգալով թէ Արտաշէսի խօսքից դառնալու լուրը ինչքան պիտի ուրախացնէ իրենց հակառակորդներին, վճռում է, ինչ գնով էլ լինի, նրան տանել Էջմիածին, քանի որ Արտաշէսը հրաժարուա՛ւ էր նրանց հետ գնալ, և լուս ունի որ Էջմիածնում նրան խելքի կը բերէ. Աւստի դիմում է հէնց իրեն, օրիորդին, նրան շողքորթելով, որ եթէ ուզենա՛ւ Արտաշէսի վրա՛յ ունեցած ազդեցութեամբ կարող է ալնպէս անել, որ նա վերադառնալ Էջմիածին և չը դրժէ իւր խոսքումը: Եւ իրաւ օրիորդի հետ խօսելուց չետո՛ւ Արտաշէսը վճռում է գնալ Էջմիածին, բայց ոչ ձեռնադրելու, ալ շուտով աչդորդ հաշիւները մաքրելու, որ գնալ բըժըկական Փակուրտի համար պատրաստելու: Այսպիսով կատարում է Արտաշէսի «Կարձը» «նեբսիններից» դէպի «գուրսինները»:

Վէպը հոգևորականութեան մասին մեր ժամանակներում գոյութիւն ունեցող երկու ծաւրահեղ կարծիքների պարկերացումն է: Մեր պահպանողականների բանակում վերջին տարիներս աչքի է զարնում մի հոսանք—դեռ դպրոցը չաւարտած, կեանքի և նրա կարիքների մասին ոչ մի գաղափար չունեցող երիտասարդներ, համարեա պատանիներ, կուսակրօնութեան երդում են տալիս: Կրօնց ղեկավարները շաք լաւ են հասկացել աչք ձևի նշանակութիւնը, որովհետեւ եթէ երիտասարդ գեանք է դուրս դալիս, ու լաւ ծանօթանում է կեանքի հետ և եթէ նա գուրկ չէ գոյութեան կուսում անհրաժեշտ քաջութիւնից, նա երբէք հոգևորականութեան չի դիմում<sup>1)</sup>: Եւ ինչո՛ւ ընդունի մի պաշտօն, որը, սկզբունքի տեսակէտը մի կողմը թողնենք, ոչ մի առաւելութիւն չը տալով հանդերձ՝ մի սոււար խմբի կողմից արժանացել է փարաջաւոր կամ սեղողլուս անարգական անու՛նը: Անանքում հոգևորականութիւնը գոյութիւն ունի իբրև մի անհրաժեշտ շարիք, որի անհետանալու համար ժամանակ է հարկաւոր միայն: Մի ժամանակ, իրաւ է, մեր հոգևորականների ձեռքում կալին ճիմնարկութիւններ, որոնք ալս կամ ալն կերպ նախապատրաստութիւն և լաւ ձգտումներ ունեցող մարդկանց կարիք ունէին—դրանք էին դպրոցները և նրանց կալածքները: Այժմ աչք էլ չը կալ, էլ հասարակական ձրգտումներով մարդր թինչ գործ կատարէ

<sup>1)</sup> Աչք հալեացքը գտնում ենք անձից: ԽՄԲ:

գիարաջալի հովանաւորութեան տակ. եկեղեցցական արարողութիւններ կամ աշխարհական ոգով քարոզներ. արժէ միթէ դրանց համար գիտութիւն և ընդունակութիւն պարագեցնել: Ասեմք Տաճկաստանում և Պարսկաստանում մեր հոգեորականների ձեռքին դեռ բաներ կան, բայց այն էլ անտնով միայն, իսկ Ֆարքորէն աղտեղ էլ բան չի կարելի անել: Իսկ կղերականներին անհրաժեշտ է ուժեղացնել իրենց բանակը: Խեղճ զըլխին և կեանքին ծանօթ մարդը նրանց ծուղակը չի ընկնիլ, ուրեմն հարկաւոր է որսալ քանի դեռ խակ են, քանի դեռ գիտեն ազգային եկեղեցու, Գերմանիայի և ասորւածաբանութեան անունով խելքը կորցնելու չափ ոգևորել:

Այս խնդրի վերաբերմամբ բաւական մտածելու նիւթ է տալիս Պ. Շանթի աչա վէպը. բայց միայն մտածելու նիւթ, իբրև վէպ դա մեր կարծիքով շատ թույլ է: Հէնց ամենագըլխաւորը—Արտաշէսի դարձը, ախար Բնչպէս եղաւ, ոչ ոք չի կարող հասկանալ: Գէպքեր չը կան, որոնցից երևար, որ նա խիտ ուժեղ բողոքը բնաւորութիւն ունի. որ նա իւր ընկերներին հակառակում է և սրած խոստումից չէր է մնում. բայց ալը բոլորը լամառութեան տպաւորութիւն է անում: Կարծէք նա բարկացած է, որ ընկերները նրան խանգարեցին Շուշիկի հետ պտուղի երթալու, և նրանցից վրէժ է առնում: Ընդհակառակը նա մի թույլ, տարօրինակ բնաւորութիւն է. հէնց նրա վարդապետանալու խոստումը—անա նա ինչ է առում աչգ մասին. «Այ

ինչու պէտք է ձեզմէ պահեմ, օրիորդ, ես իմ ընկերներու մէջ միշտ մասնաւոր գիրք մը ունեցած եմ, և աչգ ինձի շողոքորթած է. ուրիշ բան է զգալը, որ չըջապատողներուզ վրայ ազդեցութիւն մը ունիս. մարդ կարծես ուժ կ'զգայ իւր մէջը. և հիմա կը գիտակցեմ, որ իմ վարդապետանալու որոշման շատ նպաստած է այդ զգումը: Իհարկէ տղայական է աչգ փոքրիկ սնափառութիւնը, գուցէ և ծիծաղելի, չըգիտեմ, բայց աչգ աչգ պէս է»: (Գլուխ Թ.) Գէ, իհարկէ ծիծաղելի է: Շատ էլ «ընկերներու մէջ միշտ մասնաւոր գիրք մը ունեցած էք», պարոն Արտաշէս. հասա այն, որ «չըջապատը միշտ նեղ և գոց կուգալ», որ «աչգ զգացումը (գոցութեան) առաջ ալ տարրամ կերպով միշտ» ձեր մէջ ունեցել էք, որ մի անանձին սէր էք ունեցել զէպի բնութիւնը, որ, ինչպէս ասում էք, «... և որոնք (կրօնի դասերը) ինձի ոչ հետաքրքրած են, ոչ ալ զբարեցուցած. իսկ ընդհակառակը ձեր (օրիորդի) բնական գիտութիւնները ես միշտ սիրած եմ ու ձեր կասկածածէն ալ քիչ մը աւելի ծանօթ. մասնաւորապէս կենդանաբանութիւնը ու բիօլոգին: Մի կարծէք թէ միայն ձեզի է ծանօթ Գարեխնի, Սպենսէրի ու Հիւքսլէի երկերը»: (Գլուխ Գ.) Եթէ ուրեմն աչգիսի բաներ կան, ապա աչգ բոլորն ուր էին հոգեորականութեան խոստում տալու ժամանակ:

Այ միթէ լուրջ և ուժեղ բնաւորութեան տէր մարդը աչգիսի բան կ'անէ: Այ սրան հեղինակը պարկեւրացնում է իբրև հոգեորականու-

թեան դէմ իւր անձով բողոքողի մի օրինակ: Արիչ բան է, եթէ նա չունենար այդ լատիւթիւնները խօսք տալուց առաջ, և կեանքի հետ շրփելուց դրանք առաջանալին: Բայց ոչ, նա առաջ է աչ լատիւթիւններին տէրը եղել: Իսկ թէ ԲՆՆ էր նրա վարդապետանալու խոստման գլխաւոր շարժառիթը—այդ էլ տեսանք: Նա մինչև անգամ խիստ ուրախանում է, երբ օրիորդը նրան լատիւթեան Բանեանի խօսքերը «թէ դուք խելացի, մաքուր և ուժեղ բնաւորութեան տէր տղա էք»: Նա աչքան իրեն կորցնում է, որ բացական չլուծուի: «Ախ, որ ուժեղ բնաւորութեան տէր եմ, այդ առաջին անգամ ձեր բերնէն կը լսեմ. և Աստուած գիտէ, թէ որքան ճշտ է այդ միտքն ճշմարիտ է, որ ուժեղ բնաւորութիւնները շատ կը սիրեմ» (գլուխ Թ.): Այս բոլորից նրանում է, որ Արտաշէսը մի «խոխ» է և որ նա կեանքի մէջ էլ մի բան չէ կարող լինել: Նրա գործերում ապագայի համար լաւ գրաւականներ չկան:

Բայց հետաքրքրականն աչն է, թէ ինչպէս Արտաշէսը իւր աչքան հակառակ հակումներով ընկել էր հոգևորականութեան ճիրանների մէջ: Արտաշէսի իրեն բացառութիւնը խիստ անբաւարար է: Արտաշէսի նման մարդիկ մեր երիտասարդ հոգևորականների մէջ շատ կան: Այս տեղ գլխաւորն աչն է, թէ ինչ միջոցներով են պատանիներին փաթաշարի հովանաւորութեան տակ մըրցնում: Վէպում աչ կողմի պակասութիւնը խիստ զգացում է, անհրաժեշտ էին և վարդապետացունե-

րի ուսուցիչների տիպերը, որոնք Բանեանի մէջ զարմանք են չարուցել, թէ ինչպէս իրենց լուրջ կրթութեամբ մտել են մեր քաղաքակրթութեան համար պատու չբերող այդ դասակարգի մէջ: Ապա անորոշ է թողնւած Արտաշէսի անցեալը, նրա հակումները ուժեղ կերպով չեն արտաբերուած: Դէպքեր, Փաքտր են պակասում, որոնցով մենք կարողանալինք համոզել որ Արտաշէսը աչ կեանքի համար չէր սրիծեւած և աւելի ևս սրտանց ուրախանալինք նրա դարձի համար: Մի օրինակ. Տուրգենևի Բագարովը ընկերով մօտ եկած օրաչ հէնց հերեքեալ առաւօտը կանուխ վեր է կենում, փայտը վերցնում, դնում է շրջակայքում թափառելու և վերադառնում է ցեխոտ, ձուքին անատրոմիական փորձերի համար մի քանի գորտ բռնած: Մի դէպք, որ աչքան խիստ բնորոշում է Բագարովի հակումները և միանգամից զգալ է տալիս, որ սա դատարկ բաների վրաչ ժամանակ կորցնել չգիտէ: Եթէ Արտաշէսի դպրոցական կեանքից մի դէպք լինէր նկարագրուած, որից մենք կարողանալինք տեսնել նրա հակակրանքը դէպի ծէսերը, ձևականութիւնները և իմանալինք թէ նա ինչ է ուզում զրանց տեղ, աչն ժամանակ Արտաշէսը պ. Շանթի նկարագրութեամբ մեզ հասկանալի կը լինէր, մասամբ գոնէ: Գուցէ կ'ստեն թէ Խժկոնքում ժամերգութեան տեսարանն արդէն ապացոյց է: Բայց չէ որ աչ ժամանակ նրա մէջ արդէն ընկել էին փոփոխութեան սաղմերը. և որ գլխաւորն է, նա չէր

ուզում, որ իրեն ֆանհանները տեսնեն աղոթող ժամաչապիկ հագած:

Եւ այսպիսով վէպի հիւսածքը աւելի չաջող կարելի կը լինէր համարել, եթէ Արտաշէսի բնաւորութիւնը աւելի խնամքով լինէր պատկերացրած, Արտաշէսի և նրա ընկերների զպրօցական կեանքից տեսարաններ լինէին, որոնք ցոյց տալին, թէ ինչպէս աշխարհ ամեն բան սուր զգացմունքներ քննցնող և անհատականութիւնը ճշնող ուզողութիւն ունին: Նրանց ուսուցիչներին և ղեկավարներին տիպերը լինէին, թէ ինչպէս սրանք պատանիներին դեռ զպրօցի պատերի սահմանում փարաջալ էն հագցընում և հնարաւորութիւն չեն տալիս կեանքի հետ ծանօթանալու, և վերջապէս նրանց բոպէսպէս ոգևորելուց չեղող վարդապետանալու խոստում առնում, որից չեղ կենսալուց ամաչում են խեղճ պատանիները: Ապա Արտաշէսն ընկնէր մի կեանքի մէջ, որ ակընչադերի տեսնէր, թէ առանց վեղարի էլ ժողովրդին կարելի է ծառայել, աչն ժամանակ ամեն բան պարզ կը լինէր մեղ համար:

Բացի Արտաշէսից միւս տիպերն էլ թող են: Բայց հիանալի է վանահայրը, աչնքան բնական, որ մարդ իրեն անմիջապէս մի վանքի վանահօր խցի դռանն է զգում:

Մեղ թուում է, որ պ. Շանթի այս վէպը չորսպ գրութեան արդիւնք է. խնամքով վերաբերմունք դէպի վէպի գեղարւեստականութիւնը չէ եղել: Եղել է ցանկութիւն, որքան հնարաւոր է պարզ պատկերացնել երկրորդ փոխարարներին հալեացք-

ների ներածութիւնը, անշունչի շունչ տալու ցանկութիւնը, խկ սրանց գործի անբնականութեան ամենաչնչին օրինակ անզամ պակասում է, բացի ժամերգութեան առթիւ վանահօր հետ ունեցած վէճից: Վէպը ունի գեղեցիկ նկարագրական կրտորներ. ինչպէս վանքի ներսի նկարագիրը առաւօտեան ժամերգութեան ժամանակ—որը աչնքան հիանալի է. չենք կարող մեղ զրկել հաճուքից և նրա մի մասը չբերել աչտեղ.— «Պուրսի նորածին լուսը եկեղեցիին ճեղ ու երկար փոքրիկ պատուհաններն հաղւե ներս կը սպրդէր. և թանձր խաւար էր զիզւեր անկիւնները, սիւներու ետևը և գմբէթին փոսին մէջ»:

«Սորանին վրալի դուզ մը մոմերու ուժասպառ լուսերը վարդապետի արրասանած իւրաքանչիւր բառէն կարծես կը սառսուալին, տեսակ մը հիւանդոտ դեղնութիւն թափելով իրենց անմիջական մօտիկ փոքր տարածութեան մը վրայ, որ հեղձհեղձ, որքան հեռու աչնքան աւելի կը գունաթափւէր, կը մարմրէր մինչև որ մութի շերտերուն մէջ վերջնակապէս խեղդւէր»:

«Վարդապետը սիւնին տակը արծանացած իր աղօթքները կը ծամծամէր իրարու ետևէ. . և աչն (Ն. զուլու):— Տուրգենևի զրչին է չատուկ!»

Բայց և կան այսպիսի սխալներ էլ. մեր կարծիքով առաւօտ կանուխ, դեռ չլաացած, քաղցած փորով երբէք հնարաւոր չէ աչն տեսակ երկար ու բարակ վէճ ունենալ, ինչպիսին նկարագրւած է ԼԱ. գլխում: Թէև սա հասարակ բան է, բայց ուշադրու-

թիւն է գրաւում. րաք վեճերն էլ  
օրւայ մէջ իրենց ժամանակն ունին՝  
երեկոցեան և զիշերը, երբ մարդու ջղե-  
րը աւելի լարած են. Յիշում էք Րու-  
դինը—заорались до пѣтушковь.

Բայց ջնայելով այս բոլորին իւր  
շոշափած ինդրի պատճառով մանա-  
ւանդ «Դարձը» մեծ հետաքրքրու-  
թեամբ է կարդացում:

Մար. Գար.